# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 17 >> մայիսի 2013թ. N 32 - Ա

ք. Արմավիր

### ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի մայիսի 15-ի №1.1/13.1/6610-13 գրությունը.

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների և պետության հիմնարկների կողմից ձեռք բերվող որոշ ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերի և առավելագույն գների հետ կապված որոշ հարցերի պարզաբանման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված քննարկման մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին 2013 թվականի մայիսի 21-ին գործուղել քաղաք Երևան՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ